

— Շնորհակալ եմ ձեզանից, շնորհակալ: Գուր շատ և շատ օգնեցիք ինձ իմ ներքո կարգի ձգելու: Թոյլ տուէք այժմ ձեզ մօտ դալ ցերեկը, բացարձակ իսկ այժմ օրհնեցէ՛ք ինձ և թոյլ տուէք համբուրել ձեր ձեռքը՝ հովուի ձեռքը:

Թարգ. Գր. Բ. Նոր-Արեւիսան

Ս Ե Ր Գ Է Ե Ն Կ Օ

Ինչպէս է կենցաղավարում եւ աշխատում կոմս Լ. Ն. Տոլստոյը

Պ Է XIII.

Կոմսուհի Սոֆիա Անդրէեւնան վերջացրեց անային իւր բոլոր կարգադրու թիւնները և միւս ակիկներէ հետ դուրս եկաւ տան բակը:

Լեւ Նիկոլաեիչը շտապեցրեց խաղը և մի քանի բոսից յետոյ բոլոր հաւաքուածներս՝ 12 հոգի՝ ճանապարհ ընկանք դէպի մերձակայ անտառ-զբօսավայրը: Զբօսանքի ղեկավարը Լեւ Նիկոլաեիչն էր: Զառիվայրներով իջնում էինք, բարձրանում բլուրներէ վրայ, ծմակի միջով շրջաններ անում, առուակների վրայով ցատկում: Լեւ Նիկոլաեիչը ուրախ էր. աշխոյժ խօսելու տրամադիր: Դժուար տեղերում օգնում էր ակիկներին և մի ակիկնոջ համար մինչև անգամ վեր բարձրացնող մի տեսակ մեքենայ հնարեց. նա իւր ձեռավայտի մի ծայրը ամրացրեց նրա դատու մէջ և այդպիսով օգնում էր նրան վերև բարձրանալիս:

Նրա վերջապէս դուրս եկանք մի բաց տեղ, մեր առաջ բացուեց բաւական գեղեցիկ տեսարան. խիտ առ խիտ ծառերը իրենց գեղինին տուող տերևներով հրապուրիչ փայլով լուսաւորուած էին մայր մանող արևի ճառագայթներով: Տեղ տեղ որոշւում էին բարձրուղեշ՝ մութ կանաչ եղևնիներ, աւելի աչքի ընկնելով սաղարթախիտ ծառերի աշնանային ոսկեների մակերևոյթում: Ապա այցելեցինք անտառային անկտրանք, ուշադրութեամբ դիտեցինք ամեն բան և մտանք խճուղին: Լեւ Նիկոլաեիչը հետաքրքրւում էր ամեն բանով, խօսում էր բոլորի հետ, բարեկամաբար բարևում էր բոլոր հանգիպողներին, չսպասելով որ նոքա առաջ բարևեն: Ընդհանուր առմամբ անցանք մօտ 7 վերստ: Նըջագայութեան վերջում բոլորս էլ դգում էինք թեթև յոգնածութիւն և ծարաւ:

Սեղանատանը ինքնատեղը արդէն եռում էր և ժպտերես փայլում էին քաժակները: Այն նիկոլակեիչը վերցրեց Revue de Paris վերջի, նոր ստացուած համարը և առանձնացու իւր աշխատանքը: Նա մեծ հաճոյք է զգում զբոսանքից յետոյ մի փոքր թեկն ընկնել և ձեռք առնել նոր, դեռ չկարուած գիրք:

Երեկոյն վրա հասաւ: Թէյի սեղանի վրայ մոմեր վառեցին: Մի ուրիշ անկիւնում դրած կոյր սեղանի վրայ վառեցին լուսամփոփով ճրագը: Սոֆիա Անդրէլենան չորացնելու համար վառեց իւր նոր տպած լուսանկարները, յետոյ ձեռքն առաւ կարը և նստեց կոյր սեղանի մօտ՝ գլուխը կախած գէպի իւր աշխատանքը: Նրա Ձեռքին միշտ աշխատանք կայ. կամ Այն նիկոլակեիչի համար մի քան է կարում կամ նորոգում: Կարում է իւր կրտսեր աղջկայ կամ ծառաների համար: Մեծ աղջիկները քաշուեցին իրենց սենեակները: Փոքրիկը, տանու մէկ տարեկան Սաշան, նստեց սեղանի մօտ և սկսեց շախմատ խաղալ մի հիւր եկած գիմնասիստի հետ: Երկու պատանի, աշխատանքի վերնադպետով, սկսեցին խաղալ սենեակի ВОЛАНЬ (խաղի տեսակ) և իրար ծագրում էին խաղացողի ինքնասիրութեան դիպչող ամենախիստ դարձուածներով, օրինակ. «պարոն, ձեզ համար սաղահան է արկնի խաղալ և ոչ ВОЛАНЬ». «Իսկ դուք տէր իմ, լաւ է որ առաջ սովորէիք թէ ինչպէս պէտք է ձեռքում բռնել փամփո: շար և ապա թէ համարձակուէիք խաղալ մարդկանց հետ, որոնք. . .»: ևլն:

Մեծ դահլիճը պատերից կախուած նկարներով մութ շքանակներում սուղուած էր կիսախաւարի մէջ: Մի քանի առարկաներ մի տեսակ միանում էին իրանց գծագրութեամբ: Անկիւններում սպիտակին են տալիս Այն նիկոլակեիչի դիպսեայ կիսարձանները, մէկը պատրաստել է նկարիչ Գէյ, միւրը՝ Ի. Ռէպին: Պատի մօտ միջին է տալիս խոշոր դաշնամուրի միջին ստուերագիծը, սրի վրայ անորոշ գծագրուած են նոտեր, բալալայիաներ և մանդոլիններ: Սեղանների վրայ ամեն տեղ լիւրուած են գրքեր, ամսաթերթեր, նկարներ:

Յանկարծ լուում են արագ, քսուող քայլեր և սանդուխները ճապնելով, վաղ սենեակ է մտնում Այն նիկոլակեիչը ձեռին բռնած մի Ֆրանսերէն դ՛ըք: Նրա երեսը յուզուած է:

Ի՞նչ սարսափներ են կատարում Տաճկաստանում, Աստուած իմ. ե՞րբ պէտք է այս բոլորը վերջանայ: Տանեա, Մաշա, այստեղ եկէք: Լսեցէք, այս ի՞նչ է կատարում Հայաստանում, ասում է Այն նիկոլակեիչը այնպէս բարձր, որ նրան կարողանան լսել երկու սենեակի միջով:

Խաղացողները վերջացնում են խաղը: Գալիս են մտնում Այն նիկոլակեիչի երկու անդրանիկ աղջիկները: Ետքը նստում

են կոյր սեղանի շուրջը, և ևս նիկոլանիչը սկսում է կարգաւ Սասունի սարսափների մասին: Ընթերցանութիւնը երբեմն ընդհատում է զանազան նկատողութիւններով, որպէս զի թեթեանայ խեղդող յուզմունքներից: Լև նիկոլանիչը կարգում է սքանչելի: Ծնորհիւ իւր արտասովոր գեղարուեստական սուր զգայունութեան, նա առաջուց նսխզդում է զբամայում կուտակուող սարսափը և նրա ձայնը, հակառակ նրա կամքի, շքնչարդելու թեամբ խելաւում է:

Սասունում կատարուած գազանութիւնների նկարագրութիւնը բոլորի վրայ խոր օպաւորութիւն է թողնում: Մի քանի տեսարանների ընթերցանութեան ժամանակ Լև նիկոլանիչը գլուխը բարձրացնում է գրքից և յուզուած ասում է.

— Այս ի՞նչ սարսափելի է:

Մի առ ժամանակ խօսակցութիւնը դառնում է բացառաբար Սասունի կատարածի շուրջը: Մասան ներս է բերում փոստը որը սակայն այստեղ ոչ մի իրարանցում չի առաջ բերում, որովհետեւ սասունում են մեծ քանակութեամբ, այն էլ երեք կայարանից: Լև նիկոլանիչի անուամբ ստացուել է մի մեծ կապոց նամակներ, հրաւիրատուներ և հեռագիրներ: Նա բաց է անում, մի քանիսը մի կողմ դնում, միւսները կարգում բարձր ձայնով, և, եթէ նամակը զբուած էր օտար լեզուով, հիւրերի ներկայութեամբ կարգում է ուղղակի ռուսերէն, երբեմն միայն կանգ առնելով:

Գերմանացի հրապարակախօսը ուղղել էր տաք նամակ նրա վերջի յօդուածի առթիւ: Անգլիացի Կ. Լոնգոնից նրան հաղորդում էր մեծ քանակութեամբ քաղաքական և զբաղան նորութիւններ: Սկսեցին խօսել անգլիական զբաղանութեան մասին:

Ժամի 10-ին բացին ընթրիքի սեղանը: Լև նիկոլանիչը թէև խօսում էր աշխարհով և ուշադիր էր դէպի ամենքը, բայց նրա երեսին կարճես մի բան սառած մնաց և ձայնի մէջ ոչ մի անգամ ուրախ հնչիւն չլսուեց:

Նա մի ձեռք շախմատ խաղաց. այդ էլ նրան չհանդատարեց: Ընթրիքի ժամանակ բախում լսուեցին բարձր ձայներ և նոր հիւրեր ներս մտան: Տօլստոյների երկու լու բարեկամներն էին և եկել էին Մոսկուայից: Նոքա բերել էին բազմաթիւ ամենահետաքրքիր նորութիւններ: Լև նիկոլանիչը հիւրերի գալուէն շատ ուրախ էր, մտերմաբար խօսում էր նոցա հետ, բայց նրա երեսին մնաց միշտ մի անտակ ախուր և ծածկուած քան: Ակներե է, Հայաստանում կատարուած մարդկային տանջանքների նկարագրութիւնը ծանր հետք էր թողել նրա հոգու մէջ:

Ճ.

Ծն. Սերգէենկօն 1898 թ. Մոսկվայում հրատարակել է աշխարհահռչակ սուս գրողի կիսանքի մի փոքր շրջանի նկարագիրը, որի ծ.Պ. զուխը Թարգմանաբար այստեղ առաջ ենք բերում: Սասունի կտորածի անյուր աղետը ցնցել է եւ, ինչպէս նկարագրութիւնից երեւում է. դօրեղ կերպով Տօլստոյն. ուստի շատ զարմանալի է եւ դժուար բացատրելի, թէ նա ինչու չկամեցաւ օգնել Պր. Զանշեանին, երբ սա իւր «Նյբայրախան օգնութիւն» մարդասէր ձեռնարկի համար նրան էլ պիմեց եւ մի աշխատութիւն խնդրեց: